

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱԼԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՌԱՎԵԼ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վանաձոր համայնքի սոցիալապես առավել անապահով ընտանիքներին աջակցելու նպատակով՝

Վանաձորի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Վանաձոր համայնքի նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկներում ազատել վարձավճարից հետևյալ ռիսկային խմբերի երեխաներին՝
 - Երկկողմանի ծնողաժուրկ անչափահաս երեխաներ
 - ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի երեխաներ
 - Փախստական ընտանիքների անչափահաս երեխաներ
 - Չորս և ավելի անչափահաս երեխաներից առնվազն երկու երեխաների հաճախելիության դեպքում,
2. Վանաձոր համայնքի նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկներում հետևյալ ռիսկային խմբերի երեխաների վարձավճարները սահմանել 50%.
 - Միակողմանի ծնողաժուրկ անչափահաս երեխաներ
 - Չորս և ավելի անչափահաս երեխաներից առնվազն մեկ երեխայի հաճախելու դեպքում,
 - Մանկուց հաշմանդամ երեխաներ ,
 - Խնամատար ընտանիքներում ընդգրկված երեխաներ:
3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի համայնքի ավագանու 2002թ. ապրիլի 12-ի թիվ 2 որոշումը: